

ԱՇՈՒՂ ԱՇՈՏ



ՀԱՅԹԵՏՐԱՏ

891.99

8852

Ա-63 | Սիշուս աշուղ.

Աղյուսակում էր գտնվում.

42.

891.99

Ա-63

ԱՇՈՒՂ ԱՇՈՏ

ՄՅՈՒԳԱԾ Է 1961 թ.

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐ

8852

II
A 26835

Խորին Երախագիտությամբ նվիրում են իմ
մայր Հայաստանի պանծալի 26—ամյակին,

ՀԵՂ.ԻՆ.ԱՆ

АШУГ АШОТ
АШУГСКИЕ ПЕСНИ
(на армянском языке)
Ереван, Армгиз, 1946

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վերջին տարիների ընթացքում Հայկական ՍՍ Ռեպուբլիկայում աչքի ընկնող ինքնուս հորինողներից մեկն է հանդիսանում զանգեզուրցի Աշուղ Աշոտը (Աշոտ Դադալյան): Նրա հորինած երգերն ու երգերի տեքստերը տարածվել են մեր ժողովրդի մեջ և լայն ընդունելություն են գտել: 1944 թվին, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի Գործերի Վարչության նախաձեռնությամբ կազմակերպված ստուգաշեսի ու մրցության ժամանակ առաջին մրցանակի արժանացան Աշուղ Աշոտի հորինած երգերն ու երգերի տեքստերը:

Նկատի ունենալով վերահիշյալ հանգամանքները, Հայկական ՍՍՌ ժողովրդական Ստեղծագործության Տունը նպատակահարմար գտավ առանձին զբույլով հրատարակության հանձնել Աշուղ Աշոտի երգերի տեքստերից ընտրված նմուշները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ

ՍՏԱԼԻՆ

Մեր հայրենիքը քեզ հպարտ ծնեց,
Կովկասի զավակ հանճար Ստալին,
Յուր սեղ լեռներով քեզ անպարտ կնքեց,
Աշխարհի փայլակ, ճարտար Ստալին:

Սեւ փոթորկահույզ խոր ծովերի մեջ
Սուզել ես չարիդ, գցել դողի մեջ,
Ապրում ենք երգով քո ջերմ շողի մեջ,
Փայլուն արեգակ, արդար Ստալին:

Դարերով, հավերժ դալար կմնաս,
Ինչպե՞ս ասողերը միշտ վառ կմնաս,
Արեւ կմարի՝ անմար կմնաս,
Անմար արեգակ, արդար Ստալին:

Աշուղ Աշտը քո շողերի տակ
Աճեց, բոյ քաշեց, հմյր, քեզ հավերժ փանք,
Աշխարհին բերիւ խինդ ու խրախճանք,
Գիտության գագաթ, հանճար Ստալին:

ՀԱՂԹՈՂ ԲԱՆԱԿ

Քեզ ուժ տվին արև, լուսին,
Եվ հողը մեր, Կարմիր Բանակ,
Մեռնեմ ես քո բոյ ու բուսին,
Մատաղ փառքիդ, Կարմիր Բանակ:

Մեր հայրենիքը կուռ և մեծ
Քեզ փայփայեց ու քեզ սիրեց,
Եվ ամեն ինչ քեզ նվիրեց,
Փառք քաջ զորքիդ, Կարմիր Բանակ:

Մլրդիկների մեջ ծնվեցիր,
Հաղթանակով դու սնվեցիր,
Միշտ հաղթական և հաղթեցիր,
Մեռնեմ զարկիդ, Կարմիր Բանակ:

Աշուղ Աշոտ, քյամանչադ առ,
Երգիր Կարմիր Բանակը վառ,
Շարիր գովքի հրեղեն բառ —
Հաղթող մարտիկ, Կարմիր Բանակ:

ՆԱԼԵՐ ԹԱՄԱՆՅՈՒՆԵՐԻՆ

Մեր արդար գործը փառքով պսակվեց,
Ով հայ հերոսներ, Ձեր դալը բարի,
Ձեր դարձի ճամբան ցնծությամբ բացվեց,
Հաղթողներ եք դուք խիզախ, քաջարի:

Մեր նախնիների ճամբով ընթացաք,
Ձեր սուրը կտրուկ՝ թշնամու դեմ ժանտ,
Թշնամու դիմին իջաք համարձակ
Ինչպես փոթորիկ և ահարկու շանթ:

Մայր Հայաստանը Ձեր փառքն է երգում,
Ձեր դարձի ճամբին փռելով բյուր վարդ,
Ու մեր արտերում արև է ծաղկում,
Շողերն է փռում ժպտուն ու դվարթ:

Աշուղ Աշոտն եմ Ձեր ճամբին կանգնած,
Ով մեր դյուցազներ, երգս Ձեզ նվեր,
Հայրենի սիրով լցված եմ, լցված,
Ձեր փառքին մատաղ, թամանյան քաջել:

ՍԱՅԱԹ՝ ՆՈՎԱՅ

Քաղցր երգդ միշտ հնչում է մեր երկրում
Ու մեր սրտում, իմ դու հանձար Սայաթ-Նովա,
Վառ խոսքերդ ժողովրդին կյանք, սեր բերում,
Մեր սրտերի դուն խոսող լար, Սայաթ-Նովա:

Դեռ անցել է մեկ դար ու կես մահվան օրից,
Ա՛խ, երանի քեզ պես մեկը ծնվի նորից,
Քո երգերը միշտ բղխում են մեր սրտերից
Դու կմնաս մեծ՝ դարեդար, Սայաթ-Նովա:

Սայաթ-Նովա, դուն եղել ես խալխին նոքար,
Սովետն եկավ դու լուսեղեն շորեր հագար,
Մեջլիսներում վառ մնացիր, դու չհանդար,
Մեջլիսի լուս, դու անջինջ բառ, Սայաթ-Նովա:

Աշուղ Աշոտ, քո գովերքը շատ չնչին է,
Մեծ վարպետի երգը երգիր, նա անդին է,
Վառ անունն էլ սրտիդ պահիր՝ թանկագին է,
Մեծ Ֆիրդուսուն դուն բարաբար, Սայաթ-Նովա:

ՋԻՎԱՆԻ

Դու միշտ ապրում ես, երգդ վառ հնչող,
Ով դու մեր վարպետ, աշուղ Զիվանի,
Խոսքերը քո հուր ու ոգեշնչող
Կհնչեն հավետ, աշուղ Զիվանի:

Դու միշտ երգել ես տանջանք ու թախիծ,
Միշտ դժգոհել ես քո նե, մութ բախտից,
Դու վարդ ես ցանել, փուշ քաղել բաղից,
Մոլորադ հոսող գետ, աշուղ Զիվանի:

Կարոտ մնացիր դու կարմիր օրի,
Ու փափաքեցիր աշխարհում նորի,
Որ երգդ ուրախ հնչի ու ծորի,
Ծաղիկ բուրավետ, աշուղ Զիվանի:

Աշուղ Աշոտն էլ նոր ուժ է առած,
Երկիրդ հիմա դրախտ է դառած,
Երգեր է հյուսում քյամանչեն լարած,
Անուշադ մեզ հետ, աշուղ Զիվանի:

ԵՍ ԵՄ, ԵՍ

Այ ժողովուրդ, սիրո աշուղն ես եմ, ես,
Բիւրուլի պես սիրո երգողն ես եմ, ես,
Գուցե լսած կլինեք դուք իմ մասին,
Սիրուց տանջված, սրտի վերքովն ես եմ, ես:

Ես սիրում եմ հայրենիքըս հողուս չափ,
Սիրում ծաղկած Հայաստանը հողուս չափ,
Ես սիրում եմ աղիւղ յարիս հողուս չափ,
Երգեր հյուսող, սիրուց տանջվող ես եմ, ես:

Սիրու ցավից ճերմակել եմ ձյունի պես,
Ամպ կա դեմքիս, սիրթնել եմ ձյունի պես,
Տաք հոսանքից, անի, հարվում եմ ձյունի պես,
Ջանգեղուրցի Աշուղ Աշոտն ես եմ, ես:

ԻՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Դալիս ես դու հին ու հին դարերից,
Քաջ, ազատասեր, իմ հայ ժողովուրդ,
Մեծ Ստալինյան պայծառ արևից
Արև ստացար, իմ հայ ժողովուրդ:
Դարերից ծնված քո գուսանները
Երգում են անուշ հայրենի սերը:

Գեներալներդ դարուն են բացում,
Հոսող ջրերի առուն են բացում,
Սիրահարների ճանփան են բացում—
Ես գան դեպի յար, իմ հայ ժողովուրդ:
Դարերից ծնված քո գուսանները
Երգում են անուշ հայրենի սերը:

Հայրենի հողի սուրբ ծոցից ելած,
Մայր հայրենիքի ջերմ կաթով սնված,
Ռուս ժողովրդին թե թեի տված,
Դուն հերոս դարձար, իմ հայ ժողովուրդ:
Դարերից ծնված քո գուսանները,
Երգում են անուշ հայրենի սերը:

Աշուղ Աշոտն էլ հայոց երգիչ է,
Յուր տված գովքը ազգին դեռ քիչ է,
Առանց յուր երկրի երգը ոչինչ է,
Դու սրտիս պարծանք, իմ հայ ժողովուրդ:
Դարերից ծնված քո գուսանները
Երգում են անուշ հայրենի սերը:

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ

Փառք քեզ, մեր Դավիթ դու առյուծածին,
Որ կռվում էիր նստած քո հուր ձին,
Որ գոռ Մելիքին արիւր երկու կես,
Հազար տարի է դեռ հիշում ենք քեզ:

Մեր մեծ Հանճարը ասաց՝ Դավիթի
Փառքը վեր հանեք խորքից դարերի,
Որ Դավթի ուժը մեր սրտերի մեջ
Շողա, շողշողա բյուր դարեր անվերջ:

Քո թևավոր ձին թռչում էր խիղախ,
Դու կռվում էիր հպարտ ու անվախ,
Ո՛վ մեր քաջ Դավիթ, հերոս հարազատ,
Ապրում ես դարձյալ մեր երկրում ազատ:

Հէյ, Աշուղ Աշոտ, Սասնա Դավիթը
Ամուր է դրել յուր գործի հիմքը,
Ապրում է, կապրի դարերով անմեռ,
Ինչպես որ կապրի ժողովուրդը մեր:

ՕԴԱԶՈՒ ԱՂՋԻԿԸ

Մի օգաչու աղջիկ տեսա, տվի բարև,
Նրա սիրուն ջուխտ աչքերի հուրը վառ է,
Նրա սրտում շողում է վառ կյանքի արև,
Ծամերն ասես ոսկի սաղի խոսող լար է:

Ունի ամուր բազուկ և կամք քաջ հերոսի,
Մի աղջիկ է, երեսը ոնց լիալուսին,
Ու գրավիչ ժպիտ ունի քաղցր երեսին,
Սովետական մեր պարտեզի չինար ծառ է:

Թռչում է նա, ինչպես բազե վեր բարձրանում,
Հայն երկնքի ամպի ծածկոցն է բաց անում,
Չար թշնամու գլխին կարկուտ, հուր է ցանում,
Թշնամու դեմ նրա հոգին վրեժով վառ է:

Աշուղ Աշոտ, դուստրերը մեր Սովետական
Բազե դարձան ու պողպատե թևեր հագան,
Խոյասլաց Թռչում են վեր միշտ հաղթական,
Չէ՞ որ մեր դարն Ստալինյան անմահ դար է:

ՍԵՊ ՍԱՐԵՐԻ ԳՍԳԱԹԻՆ

Ջանգեղուքի սեզ սարերի գագաթին,
Մանկությունս անց եմ կացրել գառնաբաժ,
Ճարս կտրած պառկել եմ չոր քարերին,
Գառն ու ոչխար իմ չորս կողմը սարն արած:

Մնում էի տխուր մենակ ես ինքս,
Մելամաղձոտ փչում էի սրինգս,
Շատ լացելուց լիճ էր դարձել իմ գիրկս,
Հոգուս թելը ախ ու վախով էր լարված:

Մի օր եկավ մեր աշուղը Սայադին,
Տխուր երգեց շիքաստին ու բայաթին,
Տխուր նստած լսում էի էն հանգին,
Քաղցր ձայնից նա ինձ թողել էր սառած:

Այն օրվանից աշուղ լինել ցանկացա,
Սայաթ-Նովեն իմ երաղիս՝ արթնացա,
Սայաթ-Նովիս մոտս առնել հասկացա,
Սադին մատաղ, այդ ձևով էր նա լարված:

Մեծ վարպետին սրտումդ պահիր դուն, Աշուտ,
Էլ չեմ տեսնի ճամբեդ քարոտ ու փշոտ,
Քո բիւբուլը կերգի ամեն առավոտ,
Արտդ կանաչ միշտ կտեսնես, լավ վարված:

ԿԱՐՄԻՐ ՄԱՅԻՍ

Կարմիր Մայիս, նորից եկար ծիծաղով,
Զուգված նախշուն ծաղկունքներով ու ծառով,
Բայց երեսիդ անա զարմանք է շողում,
Լսում ես դու ռազմի որոտ մեր հողում:

Կարմիր Մայիս, դու էլ դարձիր մարտական,
Որ մենք լինենք այս պայքարում հաղթական,
Որ երբ կրկին երևաս մեր աշխարհում,
Էլ հոնանես վառողի բույր ու արյուն:

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ

Ես սիրում եմ Զանգեզուրի ձորերը,
Գարնան կարմիր երկար ու լավ օրերը,
Յարս զուգված մեկ տեսնելի պարտեզում,
Հեռվից երևար նրա փայլուն աչքերը:

Ես սիրում եմ Զանգեզուրի լեռները,
Քոչվորների ուղտերի լի բռնները,
Սար են գնում սարվորները զարդարված,
Սրինգ փչում, ծափ են տալիս լեռները:

Ես սիրում եմ Զանգեզուրի հողերը,
Պայծառ արև, վառ մայիսյան շողերը,
Ու յարիդ հետ նստես սարի լանջերում,
Զենով երգես Սայաթ-Նովի տաղերը:

Ես սիրում եմ Զանգեզուրի սարերը,
Աշուղների թառի, սաղի լարերը,
Ես էլ նույնպես զանգեզուրցի աշուղ եմ,
Անունս Աշոտ, երգում եմ այս երգերը:

ՀԱՐԱԶԱՏ ՄԱՅՐՍ

Զեփյուռը փչեց իմ Հայաստանից —
Ջահելիս սիրուց խանձված երեսին,
Փչեց անուշ հոտ հանդ-հանդստանից,
Բերեց հասցրուց իմ վառ մեջլիսին:

Իմ Հայաստանի վառ սիրուններից
Մեկին սիրել եմ, վառվել հուր սերից:

Հոտըն անուշ է ծաղկով լի երկրիս,
Սիրածըս այնտեղ ծաղիկ է քաղում,
Այդ ծաղիկ հոտն էլ հասավ իմ սրտին,
Ու սիրտըս հարբած երգում է, խաղում:

Իմ Հայաստանի վառ սիրուններից
Մեկին սիրել եմ, վառվել հուր սերից:

Հայաստանն է իմ ծննդավայրը,
Արև է տվել իմ սրտին, կյանքին,
Երևանն է իմ հարազատ մայրը,
Ինձ սնող մայրը քաղցր ու թանկագին:

Իմ Հայաստանի վառ սիրուններից
Մեկին սիրել եմ, վառվել հուր սերից:

Աշուղ Աշոտիս յուր կաթնաղբյուրից
Հալալ կաթ տվողն է Հայաստանը,
Ես չեմ մոռանա ամադ տվողիս,
Նրան եմ ձոնում երգիս դաստանը:

Իմ Հայաստանի վառ սիրուններից
Մեկին սիրել եմ, վառվել հուր սերից:

11
A 26835
88-9

ԾՈՎ ԱՐՏԵՐՈՒՄ

Ծով արտերում հունձ ես անում, անյ աղջիկ,
Ոսկի հասկից փունջ ես անում, անյ աղջիկ,
Բարձր ես պահում հայրենիքիդ թասիքը,
Հոգով, սրտով գործ ես անում, անյ աղջիկ:

Սուր մանգաղը ձեռիդ բռնած հնձում ես,
Մեր բանակի հաղթանակով ցնծում ես,
Օգնում ես դու մեր բանակին, ո՞վ սիրում,
Նրա հազար հաղթանակին, ո՞վ սիրում:
Աշխատում ես յարիդ տեղը մեր արտում,
Մարտիկ յարիդ վարդն ես անդին, ո՞վ սիրում:

Աշուղ Աշոտ, թասիք քեզին կյանքդ տուր,
Հայաստանիդ սարի փեշին կյանքդ տուր,
Դու շատ երգիր յար, աշխատանք, հայրենիք,
Հոգով, սիրով քո սլարկեշտին կյանքդ տուր:

ՄԵՐՍ ՎԱՌ Է

Մերս վառ է, ես միշտ սիրել եմ ուղղում,
Յարս ինչքան ինձ ցավ բերի՝ չեմ հուզվում,
Միբո ծովում աշուղներն են միշտ սուզվում:
Հեյ ջահելներ, յար սիրեցեք,— թանգ արժե,
Ուժեղ է նա, սարեր, ձորեր կշարժե:

Խեղճ Շիրինի սիրած աշուղ Ֆահրադը
Յարի խաթրու սարը ձղեց խեղճ մարդը,
Բայց ի՞նչ արած դժբախտ էր էն ռահաթը:
Հեյ ջահելներ, յար սիրեցեք,— թանգ արժե,
Ուժեղ է նա, սարեր, ձորեր կշարժե:

Աշուղ Աշոտ, դեռ շատերը կտարվեն,
Միբո կրակով շատ-շատերը կվառվեն,
Յարի էշիկեց դեռ շատ լարեր կլարվեն:
Հեյ ջահելներ, յար սիրեցեք,— թանգ արժե,
Ուժեղ է նա, սարեր, ձորեր կշարժե:

ՍԻՐՈՒՆ ԵՍ

Ուր որ դնում եմ, դու միշտ ինձ հետ ես,
Իմ հոգու թռչուն, վառվռուն յար ջան,
Ինձնից հեռու չես, իմ սրտի մեջն ես,
Քո դեմքին մատաղ, վառվռուն յար ջան:
Սիրուն, սիրուն ես, դուն կաքավիկ ես,
Թռիւր շուտ հասիր, մեկ աղավնիկ ես:

Աշխարհում ինչքան ծաղիկներ բանի,
Բույր, անուշ հոտով երկիր լցնի,
Գումարած իրար հոտիդ չի հասնի,
Դուն ինձ շունչ տվող, վառ դարուն յար ջան:
Սիրուն, սիրուն ես, դուն կաքավիկ ես,
Թռիւր շուտ հասիր, մեկ աղավնիկ ես:

Գոհար է թափվում քաղցր լեզվիցդ,
Ծոր մեղր է թափվում շրթունքներիցդ,
Կրակ է թափվում սև աչքերիցդ,
Հրաշք դարդերով դարդարուն, յար ջան:
Սիրուն, սիրուն ես, դուն կաքավիկ ես,
Թռիւր շուտ հասիր, մեկ աղավնիկ ես:

Աշուղ Աշոտիս հնչող քնարն ես,
Դարեր բոլ քաջող երգ-երգարան ես,
Հոգուս աշխարհի թանգ թանգարանն ես,
Ինձ լույս ես տալիս, դուն փայլուն յար ջան:
Սիրուն, սիրուն ես, դուն կաքավիկ ես,
Թռիւր շուտ հասիր, մեկ աղավնիկ ես:

ՈՎ ՍԻՐԵԼ Է ՆԱ ԿԻՄԱՆԱ

Միշտ ասում եմ—բյուր երանի էն աշուղին,
Ով սիրել է հոգով-սրտով յուր սիրածին,
Շատ դժվար է և շատ էլ բարդ սիրո ուղին,
Ով սիրել է՝ նա կիմանա ինչ է սերը,
Ջահել կյանքում ճերմակել է նրա հերը:

Գիշեր-ցերեկ աչքս գցած, յան, քո ճանքին,
Վառվում եմ ես, սրտեղ ես դուն, այ իմ անգին,
Երազել եմ քեզ հետ նստեմ էս քաղաքին:
Ով սիրել է՝ նա կիմանա ինչ է սերը,
Ջահել կյանքում ճերմակել է նրա հերը:

Բժիշկ չկա՝ մի ճար անի էս իմ դարդին,
Սիրով հարբած կանչում եմ ես իմ ալ վարդին,
Ես ինչ ասեմ, ի՞նչ անուն տամ իմ սե բախտին:
Ով սիրել է՝ նա կիմանա ինչ է սերը,
Ջահել կյանքում ճերմակել է նրա հերը:

Աշուղ Աշոտ, քո հեքիմը քո վարդ յարն է,
Մեկ էլ կանչիր, նա քո վերքի դեղն ու ճարն է,
Յարը որ կա՝ մարդու սրտի խոսող լարն է:
Ով սիրել է՝ նա կիմանա ինչ է սերը,
Ջահել կյանքում ճերմակել է նրա հերը:

ՔԱՅԼՎԱԾՔԻՆ ԿԱՅԼՎԱԾՔԻՆ

Ես քո խալիդ հեյրան լինեմ, հեյրանը,
Դուն ես մեր էս սարի մարալ-ջեյրանը,
Թույլ տուր լինեմ ես քո սիրած սեյրանը,
Նազիդ մատաղ, ինձ արել ես դադարդուն,
Սերդ երբեք ինձ չի տալիս դադար-քուն:
Ա՛խ, քայլվածքդ, նայվածքդ,
Սիրտս է վառում հայացքդ:

Ես քեզ համար երգեր շատ եմ հնարել,
Իմ քյամանչան սիրո ճամբին եմ լարել,
Դարդի դարման ես քեզ յար եմ համարել:
Հույսով էի սրտիս վերքին ճար կտառ,
Բաղ-բաղչիցդ հիվանդիդ մեկ բար կտառ:
Ա՛խ, քայլվածքդ, նայվածքդ,
Սիրտս է վառում հայացքդ:

Ազնւղ Աշոտ, յար սիրելը հեշտ բան չի,
Գիշեր-ցերեկ կուզես դու միշտ յար կանչի,
Ա՛խ, գուցէ նա բնավ էլ քեզ հավան չի:
Սիրտ խորովող երգեր հյուսիւր քո յարին,
Գուցէ խղճա ու հասնի քո հավարին:
Ա՛խ, քայլվածքդ, նայվածքդ,
Սիրտ է վառում հայացքդ:

ԽԱՍ ԱՂՋԻԿ

Ո՛վ նազելի, դարդարովել ես դու շորերով, խաս աղջիկ,
 Ինչ կլինի, որ ինձ սիրես, մի օր ինձ մոտ դաս, աղջիկ,
 Գնա, աղջիկ, խաս աղջիկ, բերանդ ոսկի թաս, աղջիկ:

Մեր քարափին նստեմ մենակ ու միշտ նայեմ քո ճանքին,
 Ասած ժամիս թե որ եկար նստենք մեկտեղ բաս, աղջիկ,
 Գնա, աղջիկ, խաս աղջիկ, շրթերդ ոսկի թաս, աղջիկ:

Խոսենք սերից, սիրո դարդից, իրար բացենք մեր սիրտը,
 Պարզ դիշերով ինչքան մնամ, դուն էլ ինձ մոտ կաց, աղջիկ,
 Գնա, աղջիկ, խաս աղջիկ, աչքերդ ոսկի թաս, աղջիկ:

Թող մի օր էլ իմ սրտի մեջ լինի ուրախ հարսանիք,
 Թե որ չեկար դու, թողնում ես ինձ քեզանից պաս, աղջիկ,
 Գնա աղջիկ, խաս աղջիկ, կուրծքդ ոսկի թաս, աղջիկ:

Սիրո դարդը ինձ կապանի, կտանի շուտ դերեզման,
 Կարթնանամ ես, նորից մեռնեմ՝ թե որ վրես լաս, աղջիկ,
 Գնա, աղջիկ, խաս աղջիկ, գինու ոսկի թաս, աղջիկ:

Ես աշուղ եմ զանգեզուրցի և իմ անունս է Աշոտ,
 Մատաղ եմ քեզ, կուզես արա սիրտս հազար մաս, աղջիկ,
 Գնա, աղջիկ, խաս աղջիկ, անմահ ջրի թաս, աղջիկ:

ԵՍ ՔԵԶ ՍԻՐԱՀԱՐ

Անուշ բուրմուռնքով՝ կոկոն բերանդ,
 Աղջի ջան, աղջի, ես քո հեյրանդ,
 Դու կարմիր վարդ ես, ես մի բուլբուլ եմ,
 Էդ սանամ դեմքիդ նոքար օղուլ եմ:
 Մայրդ՝ բուրմուռնքով խառ վարդենի ծառ,
 Իսկ դու՝ կոկոն վարդ, ես՝ քեզ սիրահար:

Դու՝ վառված հրադ, ես՝ մի փարվանա,
 Գլխովըդ ման գամ, էշխի դիվանա,
 Դու՝ սարի մարալ, իսկ ես՝ մի որսորդ,
 Դուն ես ինձ խփել, ես ի՞նչ եմ քեզ մոտ:
 Մայրդ՝ բուրմուռնքով խառ վարդենի ծառ,
 Իսկ դու՝ կոկոն վարդ, ես՝ քեզ սիրահար:

Այս սիրո ծովում դու մի ոսկեձուկ,
 Ուռկան եմ գցում, չի ընկնում գիպուկ,
 Հեյ դու, իմ հրեշտակ, էս ում հետ եմ, ում,
 Հետդ խոսում եմ, բայց քեզ չեմ տեսնում:
 Մայրդ՝ բուրմուռնքով խառ վարդենի ծառ,
 Իսկ դու՝ կոկոն վարդ, ես՝ քեզ սիրահար:

Աշուղ Աշոտիս դու մի ոսկի վաղ,
 Միշտ երգում ենք քեզ ես և քյամանչաս,
 Երգերս՝ սիրով քեզ եմ նվիրել,
 Ուղում եմ երգել քեզ ու քեզ սիրել:
 Մայրդ՝ բուրմուռնքով խառ վարդենի ծառ,
 Իսկ դու՝ կոկոն վարդ, ես՝ քեզ սիրահար:

ԱՂԱՋԻԿՆ ՈՒ ՏՂԱՆ

Տղա — Դու աչեհան գեղեցկուհի, հորդ գցած բաղումն
 ի՞նչ կա,
 Հայրդ հայտնի մի այգեպան, աստ տեսնեմ
 Թաղումն ի՞նչ կա,
 Ով դանանա թառլան աղջիկ, խոսքերիս մեկ
 պատասխան տուր,
 Ասա տեսնեմ վաղ առավոտ շողեթաթախ շաղումն
 ի՞նչ կա:

Աղջիկ — Ասեմ լսիր, երգիչ ախպեր, մեր բաղումը ալ
 վարդեր կան,
 Առավոտյան արշալույսին գովերգ երգող
 բիլբուլներ կան,
 Հորս ցանած ու պահպանած Թաղերումը
 շամամներ կան,
 Դուն էլ արի սաղը ձեռքիդ, տեսնենք քո նոր
 տաղումն ի՞նչ կա:

Տղա — Տաղերիս մեջ խի՞նդ ու սեր կա, սիրով լցված
 պարկեշտ աղջիկ,
 Ես երգում եմ յարի շրթեր, կարմիր գլխի,
 սիրուն աղջիկ,
 Ես սիրում եմ ամեն մի վախտ շարից առնել վրեժ,
 աղջիկ,
 Արդյոք դու ինձ լավ հասկացար, թե իմ այս նոր
 խաղումն ի՞նչ կա:

Սղօթիկ— Որ աշտակէ, աշտակ Սշտա, մեր աշտ քաղին՝
 գովքին հասիր,
 Հայրս քեզի մի վարդ կտա, հորից կգտա էշիս
 համարի,
 Դո՛ւ կսուզվես ծովի հատակ, որպէս վարժված մի
 համարի,
 Հա՛յ կիմանաս՝ հորս ծաղկի հոտով լցված
 բաղումն ինչ կա:

ԱՇՈՒՂ ԵՄ

Աշուղ եմ դարձել սև-սև աչերիդ,
 Էդ քաղցր լեզվիդ, կեռ-կեռ ունքերիդ,
 Ոսկե հյուսքերով երկար ծամերիդ:
 Ոչ մի ծաղիկ քո բուրմուռնքը չունի,
 Ոչ մի մայր քեզ պես գողալ չի ծնի:

Շրթերդ վառման և թուշըդ վարդ է,
 Նայվածքդ՝ սիրող սրտերին կարթ է,
 Ա՛խ, քեզ առնողը բախտավոր մարդ է:
 Ոչ մի ծաղիկ քո բուրմուռնքը չունի,
 Ոչ մի մայր քեզ պես գողալ չի ծնի:

Դուրս եկած շիվ ես, կրծքինդ՝ լիմոն,
 Վիզդ՝ կարապի, իսկ մատներդ էլ մոմ,
 Շատ, շատ եմ գրել վառ տաղեր քեզ ձոն:
 Ոչ մի ծաղիկ քո բուրմուռնքը չունի,
 Ոչ մի մայր քեզ պես գողալ չի ծնի:

Քո մորը մատաղ, որ ծնել է քեզ,
 Դու գարնանային արևի ծեղ ես,
 Աշուղ Աշոտի սրտին մի նեւ ես:
 Ոչ մի ծաղիկ քո բուրմուռնքը չունի,
 Ոչ մի մայր քեզ պես գողալ չի ծնի:

ԴՈՒՆ ԾԱՂԿԱԾ ԾԱՌ ԵՍ

Ով սիրուն աղջիկ, քո ցավը տանեմ,
 Հալվում եմ սիրուցդ, ասա՛ ի՞նչ անեմ,
 Կրակ ես դցել իմ սրտի մեջը,
 Թե որ խիղճ ունես, մի թողնի վառվեմ:
 Դուն ծաղկած ծառ ես,
 Դուլ ու բահար ես,
 Թառ ու քյամանչի
 Հնչող վառ լար ես:

Էդ քնքուշ կուրծքդ բամբակե քուլա,
 Զով վարդի ջրով ծոցիկդ կուլա,
 Սե խալդ վրին ոնց որ մռամուղ,
 Ով դու սիրունիկ մարալ ու դուրնա:
 Դուն ծաղկած ծառ ես,
 Դուլ ու բահար ես,
 Թառ ու քյամանչի
 Հնչող վառ լար ես:

Սիրուն նազանքով հողիս հանում ես,
 Ա՛խ, ուշս գլխիցս առնում տանում ես,
 Դրախտ եմ ընկնում քաղցր ձայնի տակ—
 Կոկոն բերանդ երբ որ բանում ես:
 Դուն ծաղկած ծառ ես,
 Դուլ ու բահար ես,
 Թառ ու քյամանչի
 Հնչող վառ լար ես:

Աշուղ Աշոտին դու լավ ճանաչի,
Արի, նրանից հեռու մի փախչի,
Հոգիս հոգուդ հետ դրախտը կընկնի,
Թե որ մեկ անգամ թողնես քեզ պաչի:
Դուն ծաղկած ծառ ես,
Գուլ ու բահար ես,
Թառ ու քյամանչի,
Հնչող վառ լար ես:

ՅԱՐԻՍ ՃԱՄԱՐԻՆ

Աչք եմ գցել, յա՛ր, քո ճամբին,
Գարուն բացվի թռչես դաս,
Վարդիդ պահես էդ քո գրկին,
Ալ շրթերին համբույր տաս:

Իմ աչերին, իմ շրթերին
Ուրիշ ոչ ոք չի տիրի,
Մեկին սիրած ազնիվ փերին
Ուրիշ մարդու չի սիրի:

Կարասումն է կարմիր գինին,
Վերադարձիր, կխմես,
Մատաղ լինեմ ես քո ջանին,
Սնվախ կովիր, բայց չընկնես:

Նոր երգերից մեր հարսանքին
Կերգի Աշուղ Աշոտը,
Հաղթանակով տուն եկ, անգին,
Նստիր սիրածիդ մոտը:

ՎԱՌՈՂ ՍԵՐ

Մոտս նստիր, մի խոսք ասա դարդւման,
 Մի թողնիր ինձ անմխիթար, անզուժան,
 Թե բժիշկ ես, իմ վերքերին դիր դարման:
 Վառող սիրուց ինձ ազատիր, իմաստուն,
 Ոչ ոք չունեմ, սերս միայն դուն ես, դուն:

Վառող սերդ սիրաս արեց մասեմաս,
 Էրվում եմ ես, ծուխ չկա, որ համատաս,
 Խղճա դոնե, վերջին ժամին ինձ մոտ դաս:
 Վառող սիրուց ինձ ազատիր, իմաստուն,
 Ոչ ոք չունեմ, սերս միայն դուն ես, դուն:

Երգս է տխուր, դուն ինձանից դնում ես,
 Թե գնաս էլ՝ հոգուս միջին մնում ես,
 Քո գնալով ինձ դերեզման դնում ես:
 Վառող սիրուց ինձ ազատիր, իմաստուն,
 Ոչ ոք չունեմ, սերս միայն դուն ես, դուն:

Ես Աշտուրս, ափսոս, սիրտդ չիմացա,
 Քեզնից հեռու, ինձ շատ մոտիկ իմացա,
 Սիրաս քար էր, էսչափ էլ որ դիմացա:
 Վառող սիրուց ինձ ազատիր իմաստուն,
 Ոչ ոք չունեմ, սերս միայն դուն ես, դուն:

ԶԱՆԳԱԶՈՒՐԻ ՓՆՈՒՆԴ

Նորից, յար ջան, հիշեցի ես սև ունքերդ,
 Ո՞նց մոռանամ, քանի որ կա տանջող սերդ,
 Բաժակիս մեջ միշտ տեսնում եմ վառ պատկերդ:
 Հեյրանդ եմ, ես իմ կյանքում քեզնով տարված,
 Ջահել եմ ես, ինձ մի խփիր սիրո հարված,
 Դուն ծաղկավառ Ջանգեղուրի բարի ծնունդ,
 Հազար տեսակ վարդերից ես առել սնունդ:

Խղճիս մոտիկ՝ շատ բարի է ազնիվ մայրդ,
 Հոգուդ մատաղ, Ջանգեղուրն է ծննդավայրդ,
 Մեկ-մեկ երգիր, գոնե լսենք անուշ ձայնդ:
 Հեյրանդ եմ, ես իմ կյանքում քեզնով տարված,
 Ջահել եմ ես, ինձ մի խփիր սիրո հարված,
 Դուն ծաղկավառ Ջանգեղուրի բարի ծնունդ,
 Հազար տեսակ վարդերից ես առել սնունդ:

Դուն զգուշ կաց, որ քեզ չառնի անսեր մարդը,
 Սերից հեռու ինչ կիմանա ինչ է դարդը,
 Ես երգում եմ, դալմիր մնա կոկոն վարդը:
 Հեյրանդ եմ, ես իմ կյանքում քեզնով տարված,
 Ջահել եմ ես, ինձ մի խփիր սիրո հարված,
 Դուն ծաղկավառ Ջանգեղուրի բարի ծնունդ,
 Հազար տեսակ վարդերից ես առել սնունդ:

Ինձ ասում են՝ Աշուղ Աշոտ, յարդ սեր է,
 Ասում եմ ես սրտիս միջին նա մի հոսք է,
 Թերթունքդ սև ուժեղ ծակող մի սուր թուր է:
 Հեյրանդ եմ, ես իմ կյանքում քեզնով տարված,
 Ջահել եմ ես, ինձ մի խփիր, սիրո հարված,
 Դուն ծաղկավառ Ջանգեղուրի բարի ծնունդ,
 Հազար տեսակ վարդերից ես առել սնունդ:

ՍԵՎ ՈՒՆՔԵՐԻՒՄ ՏԱՐՎԵԼ ԵՄ

Քեզ սիրել եմ հոգուս միջին, ո՛վ անգին,
Շողշողուն քար, դուն իմ գոհար թանկագին,
Թող որ բիւթուլն անուշ երգի քո գրկին:

Սև աչերիդ, սև ունքերիդ տարվել եմ,
Յար ջան, սիրո կրակովդ վառվել եմ:

Աշուղ եմ ես, շուտ եկ լսի քո յարին,
Ոչ թե վատդ, այլ ասում եմ քո բարին,
Դու չլսես իմ դուշմանին ու չարին:

Սև աչերիդ, սև ունքերիդ տարվել եմ,
Յար ջան, սիրո կրակովդ վառվել եմ:

Ուր որ գնաս, Աշուտիս էլ հետդ տար,
Լեզվիդ մատաղ, դուն խոսում ես շատ ճարտար,
Քեզ սիրել եմ, հոգուս ծաղիկն ես արդար:

Սև աչերիդ, սև ունքերիդ տարվել եմ,
Յար ջան, սիրո կրակովդ վառվել եմ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ստալին	5
Հաղթող բանակ	6
Նվեր Թաճանցիներին	7
Սայաթ-Նովա	8
Զիվանի	9
Ես եմ, ես	10
Իմ հայ ժողովրդին	11
Սասունցի Դավիթ	12
Օդաչու աղջիկը	13
Սեզ սարերի գազաթին	14
Կարմիր մայիս	15
Ես սիրում եմ	16
Հարազատ մայրս	17
Ծով արտերում	18
Սերս լառ է	19
Սիրուն ես	20
Ով սիրել է՝ նա կիմանա	21
Քայլվածքդ, նայվածքդ	22
Խոս աղջիկ	23
Ես քեզ սիրահար	24
Աղջիկն ու տղան	25
Աշուղ եմ	27
Դուն ծաղկած ծառ ես	28
Յարիս համբին	30
Վառող սեր	31
Զանգեզուրի ծնունդ	32
Սև ունքերիդ տարվել եմ	33

Պատ. խմբագիր՝ Ա. Վեսունցի

ՎՖ 12286: Պատվեր 381. Տիրաժ 3000. 21/4 տպագրական մամ.,
հեղինակ. 0,85 մամուլ, ստորագրված է տպագրության
15 օգոստոսի 1946 թ.

ՀՅՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և Հրատարակչութ.
Վարչության № 1 տպարան, Երևան 1946 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220026835

ԳԻՆԸ Է Ռ.

